Վճռաբեկ-ՍԴ «հակամարտություն» է հասունանում. Առայժմ տուժում են քաղաքացիները

21.11.2012 10:55

Դատական իշխանության բարձրագույն մարմինը չի կատարում ՍԴ-ի որոշումները: Որևէ քաղաքացիական գործով չկա դեպք, որ նորմը հակասահմանադրական ճանաչված լինի ու դատական ակտը բեկանվի: Ձևական վարույթ են հարուցում, լինում են դեպքեր, որ ընդհանրապես վարույթ չեն էլ հարուցում ու դատական ակտը թողնում են նույնը: «Pastinfo.am»-ի թղթակցի հետ զրույցում նշեց փաստաբան Կարեն Մեժլումյանը:

2006 թ.-ից ի վեր, երբ սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ քաղաքացիները հնարավորություն ստացան Սահմանադրական դատարանում վիճարկելու իրենց նկատմամբ դատարանների կողմից կիրառված դրույթների սահմանադրականությունը, ՍԴ-ն այս առումով բազմաթիվ դիմումներ է ստանում: Սահմանադրական դատարանը անձանց նկատմամբ կիրառված բազում դրույթներ ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թ. ընդունված որոշումների վերաբերյալ ՍԴ տարեկան հաղորդման համաձայն՝ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների հիման վրա քննության առնված 41 գործերով շուրջ 19 տոկոսի դեպքում օրենքների դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող և անվավեր:

«Այդ որոշումները մեծ նշանակություն ունեն օբյեկտիվ իրավունքների պաշտպանության և օրենսդրական անհրաժեշտ բարեփոխումների առումով»,- նշվում է ՍԴ տարեկան հաղորդման մեջ:

Բայց փաստերը ցույց են տալիս, որ ՍԴ որոշումները իրավունքների պաշտպանության առումով անարդյունավետ են լինում: «Մենք մի քանի անգամ դիմել ենք Վճռաբեկ դատարան, որպեսզի բեկանվեն այն դատական ակտերը, որոնք ընկած են եղել ՍԴ գործի հիմքում, սակայն Վճռաբեկ դատարանը դրանք չի վերանայել»,- նշեց փաստաբանը:

Ասվածը փաստաբանը հստակեցրեց Սիլվա Ասատրյանի քրեական գործի օրինակով:

«Անձը չորս անգամ դիմել է Սահմանադրական դատարան, չորս անգամ էլ ՍԴ-ն նրա նկատմամբ կիրառված նորմերը հակասահմանադրական է ճանաչել: Անգամ այդ հիմքով Քաղաքացիական

դատավարության օրենսգրքի մի ամբողջ գլուխ է հակասահմանադրական ճանաչվել: Սակայն երբ ՍԴ-ի որոշման հիման վրա բերում է Վճռաբեկ բողոք՝ նոր հանգամանքի հիմքով, Վճռաբեկ դատարանն այդ բողոքը կա՛մ մերժում է, կա՛մ վերադարձնում»:

Թեև օրենքը ՍԴ-ի մասին հստակ նշում է, որ ՍԴ-ի որոշումը, որով Սահմանադրությանը հակասող է ճանաչվել կիրառված նորմը, դատական ակտի վերանայման հիմք է՝ նոր հանգամանքի հիմքով, բայց Վճռաբեկ դատարանը վարույթ չի ընդունում բերված բողոքները:

Կրկին դիմեցինք Սահմանադրական դատարան, նշեցինք, որ ստացվում է՝ ՍԴ-ի որոշումից հետո կարող է վարույթ չընդունվել: ՍԴ-ն նշել է՝ իրավական պետությունում չի կարող նման բան տեղի ունենալ: Չի կարող Սահմանադրությանը հակասող նորմը շարունակել գործել:

«ՍԴ-ն մեր բողոքները վերադարձրեց, ու վարույթ չընդունեց, մերժեց: Նաև պատասխանեց, որ բարձրացրած հարցին արդեն երկու անգամ տարբեր որոշումներով անդրադարձել է:

Մինչդեռ դատական պրակտիկան այլ ուղղությամբ է ընթանում»,- նշեց փաստաբանը:

Որն է պատճառը, որ ՍԴ որոշումները մնում են անկատար: «Pastinfo.am»-ի թղթակցի հարցին ի պատասխան Կ. Մեժլումյանը պատասխանեց. «Դատարաններն ուզում են այդկերպ ասել՛ տեսեք, մեր դատական ակտերն անշրջելի են, կլինի Եվրոպական դատարանի որոշում, թե Սահմանադրական դատարանի՝ կապ չունի, մեր դատական ակտերը, մեր մոտեցումները անշրջելի են»:

Հեղինակ:

«Փաստինֆո»

Աղբյուրը՝ http://www.pastinfo.am/node/3814

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })